Գևորգյան Գայանե (Հայաստան, ԵՊԼՀ)

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԼԵԶՎԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ. ՊԱՐՏԻԶԱԿ

Բարբառագիտության և հայոց լեզվի պատմության կարևոր խնդիրներից է արևմտահայ խոսվածքների համակողմանի ու ամբողջական քննությունը, որը գիտական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես նյութի առումով: Բանն այն է, որ Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրերի խոսվածքներ իրենց կրողների հետ անդարձ կորել են. օրեցօր նվազում են նաև այդ բարբառների մասին տեղեկություններ ստանալու հնարավորությունները: Բարբառախոսների նվազումը, լեզվական միասնական միջավայրի բացակայությունը, ինչպես և արտաքին ազդեցությունները սահմանափակում են խոսվածքների գործառության շրջանակները. դրանք առավելագույնը տարիների կենսունակություն ունեն: Նկատի ունենալով, որ միայն պահպանված միավորների քննությունը կարող է ինչ-որ չափով լրացնել բացը, հոդվածում ներկայացրել ենք արևմտահայ խոսվածքներից մեկի՝ Պարտիզակի հնչյուն-նաքերականական համակարգերի նկարագիրը:

Պարտիզակի խոսվածքը գործածվել է Նիկոմեդիայի շրջանի Պարտիզակ քաղաքում: Պարտիզակը Նիկոմեդիայից մոտավորապես 20 կմ հեռավորության վրա էր: Մոտակա գյուղերն էին՝ Սյօլյօզ, Մեծ գյուղ, Արմաշ, Խասկալ: Ըստ «Հայ սփյուռք» հանրագիտարանի՝ Պարտիզակը (այժմ՝ Բախչեջիկ) 16-րդ դարում հիմնադրել են Սեբաստիայի նահանգի Պարտիզակ գյուղից գաղթած հայերը: 20-րդ դարի սկզբին այն ունեցել է մոտ 10000 հայ բնակիչ: Եղել է Կ. Պոլսի հայ մտավորականության ամառանոցը: Բնակչությունը հիմնականում զբաղվել է ծխախոտագործությամբ, շերամապահությամբ, փայտի ու փայտածուխի արտադրությամբ: Գործել են առաքելական, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիներ, 8 դպրոց, որոնցից մեկը՝ բարձրագույն: Հրատարակվել են «Փարոս», «Պայքար», «Մեղու» և այլ պարբերականներ: 1915-ին Պարտիզակի հայերը ենթարկվել են տեղահանության և կոտորածի: 1918-ին ջարդից փրկված 3,5 հազար պարտիզակցի վերահաստատվել է Պարտիզակում, սակայն 1920-ին՝ հույն-թուրքական պատերազմի ժամանակ, կրկին

տեղահանվել: Մոտ 50 ընտանիք հայրենադարձվել են Հայաստան, իսկ պարտիզակցիների մի ստվար խումբ վերաբնակվել է Հալեպում[1]:

Հոդվածում Պարտիզակի խոսվածքի[2] լեզվական բնութագիրը տրվում է՝ ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված «Պարտիզակի խոսվածքը» աշխատանքի[3]: Պարտիզակի խոսվածքը լրացվել է Ներսես Կարապետի Ջաջիկյանի (ծնվ. 1926 թվ.) օգնությամբ Արարատի շրջանի Արմաշ գյուղում 1985 թվ. աշնանը: Այն Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀԲԱ) ծրագրով գրանցել է բարբառագետ Դարիկո Կոստանդյանը: Ըստ նրա վկայության՝ Ներսես Ջաջիկյանը Պարտիզակի բարբառը լսել և սովորել է պարտիզակցի ծնողներից, որոնք Պարտիզակից տեղափոխվել են Պոլիս, իսկ 1926 թվ.՝ Հայաստան: Դարիկո Կոստանդյանը նաև փաստում է, որ Ներսես Ջաջիկյանը, որը հրաշալի կերպով յուրացրել էր Պարտիզակի խոսվածքը, մեծ սիրով ու եռանդով է հաղորդել այն: Բարբառի գրանցմանը օժանդակել է նաև նրա կինը՝ Սաթենիկ Ջաջիկյանը, որը, երկար տարիներ ապրելով սկեսուրի հետ, սովորել էր նրա բարբառը[4]:

Պարտիզակի խոսվածքը, ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման, պատկանում է Կը ճյուղին, ըստ վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման՝ Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Պոլսի միջբարբառին[5]:

Հինհայերենյան ձայնավորները՝ *ա, ի, է, օ, ու, ը*, գործառելով Պարտիզակի խոսվածքում, որակական փոփոխությունների չեն ենթարկվել: *Ա* ձայնավորը հանդիպում է տարբեր դիրքերում՝ հինհայերենյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ հնչյուններին կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող(*բարձ-պարց, բարակ-պարակ, բան-պան, դաս-տաս, դանակ-տանակ, ձագ-ծաք*), *մ, ն* ռնգայիններին նախորդող (*ամիս-ամիս, ամպ-ամբ, թան-թան, համար-համար, մանել-մանէլ, քամել-քամէլ, նշան-նիշան* և այլն), ինչպես նաև շչականներին նախորդող և հաջորդող դիրքերում (*ճանճ-ջանջ, բաժին-պաժին, խաչակնքել-խաչ հանէլ, խարշել-խաշէլ, արժել-արժէլ, կարճ-գարջ* և այլն: Ու-ն

---

[1] *Հայ սփյուռք*, 2003, էջ 182:

[2] Պարտիզակի խոսվածքի վերաբերյալ բարբառագիտական գրականության մեջ կան մասնակի դիտարկումներ (տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Երևան, 1950, էջ 352-353, **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն,* Երևան, 1972, էջ 52, 71, 83, 109):

[3] Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր* (այսուհետ՝ ՀԲԱՆ), Պարտիզակի խոսվածք, հ. 284:

[4] Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր /այսուհետ՝ ՀԲԱՆ/, Պարտիզակի խոսվածք, հ. 284:

[5] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն,* Երևան, 1972, էջ 133:

և ի-ն փոփոխության չեն ենթարկվել ինչպես շեշտակիր դիրքում *(թունդ-թունդ, փուշ-փուշ, սուտ-սուդ, կնիկ-կընիգ, կծիկ-գըձիգ, քենի-քէնի* և այլն), այնպես էլ ձայնեղներից կամ դրանցից առաջացած խուլերից հետո (*բուք-բուք, գութան-գութան, տուն-դուն, դուռ-դուռ, ձուկ-ձուգ, ջուր-ճուր* և այլն)։

Ո և *Ե* տառերը խոսվածքում չեն գործառում։ *Ո-ի փոխարեն* միավանկ և երկվանկ բառերի *սկզբում* (*որբ-օրփ, որդ-օրթ, ով-վօվ, ոչխար-օշխար, ոջիլ-օշիլ, որդնել-օրթօղէլ, որսալ-օրսալ, ռռնալ-օռնալ, ոսկի-օսկի* և այլն), հինհայերենյան ձայնեղներին (*բ, գ, դ, ձ, ջ*) կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող (*բողկ-փօղգ, գործ-քօրձ, ձոր-ծօր* և այլն), ինչպես նաև բառամիջի շեշտակիր և նախաշեշտ դիրքերում *(թոք-թօք, լողալ-լօկնալ, կոշտ-կօշտ, մոմ-մօմ, խոնարհ-խօնար* և այլն) գործածվում է *օ*-ն։ Խոսվածքում չգործառող *ե*-ի դիմաց միավանկ և երկվանկ բառերի սկզբում (*ելանել-էլլալ, երես-էրէս, երնալ-էրէվնալ, երկար-էրգան նն*), բառամիջի շեշտակիր (*խելք-խէլք, ցեց-ցէց, ավել-ավէլ, ավեր-ավէր* նն), ինչպես նաև *ռ* ձայնորդին նախորդող *դիրքերում* (*մեռնել-մէռնէլ, սիսեռն-սիսէռ, մեռոն-մէռուն* նն) առկա է *է* ձայնավորը։

Պարտիզակի խոսվածքում հինհայերենյան երկբարբառները վերածվել են ձայնավորների։ Այսպես՝ շեշտակիր *այ* երկբարբառի դիմաց գործածվում է *ա* ձայնավոր *(այդ-ադ, լայն-լան, ծայր-ծար, ձայն-ծան, մայր-մար* և այլն), *աւ* երկբարբառի փոխարեն բոլոր դիրքերում գործածվում է օ հնչյուն *(աւր-օր, աւձ-օց, աւծել-օծէլ, աւրհնել-օրշնէլ, տաւն-տօն, եաւթն-յօթ* և այլն*), ոյ* և *իւ* երկբարբառների դիմաց՝ *ու* ձայնավոր, այսպես՝ *բոյն-բուն, թոյլ-թուլ, բոյթ-բութ, ոյժ-ուժ* և *ալիւր-ալուր, աղբիւր-ախպուր, հարիւր-հարուր, հիւսել-հուսէլ, նեղութիւն-նէղութին* և այլն։

Պարտիզակի խոսվածքում ձայնեղ պայթականների և կիսաշփականների (*բ, գ, դ, ձ, ջ*) *դիմաց առկա հնչյունները, ըստ* խոսվածքը գրանցողի՝ Դ. Կոստանդյանի, ոչ հստակ ձայնեղ են, ոչ էլ հստակ խուլ[6]։ Արտաբերական հստակություն չունեն նաև խուլ պայթական և պայթաշփական բաղաձայնները. դրանք, պայմանավորված հնչյունական շղթայում նրանց նախորդող հնչյունի բնույթով (խուլից հետո՝ խուլ. ձայնավոր, ձայնեղ և ձայնորդ հնչյուններից հետո՝ ձայնեղ) մերթ ձայնեղ (բ,գ,դ, ձ, ջ*)*, մերթ խուլ (պ, կ, տ, ծ, ճ) հնչյուններ են արտաբերվում։ Այս մասին փաստում է Դ Կոստանդյանը. «Նույն երևույթն է առկա նաև հինհայերենյան խուլ պայթական և կիսաշփական հնչյունների դիմաց

[6] Տ ե ՛ՀՓ Ա,ՆՊա ր տ ի զ,ա կ2 8 4

լսվող բաղաձայններում, որոնց գրանցման համար դարձյալ կիրառել ենք վերոնշյալ սկզբունքը՝ դ/տուն, ձ/ծունգ և այլն»[7]: Շարունակելով իր միտքը՝ Դ. Կոստանդյանը վկայում է, որ «խոսվածքում այնքան ազատ է խուլ և ձայնեղ պայթականների և կիսաշթականների ազատ փոխանցումը, որ վերջինս գործում է նույնիսկ միջձայնավորային և բառավերջի դիրքերում՝ ածէլ/աձէլ, ակիշ/ագիշ, պատ/բադ և այլն»[8]:

Հինհայերենյան *խ և հ* խուլ հնչյուններին բառի բոլոր դիրքերում համապատասխանում է խուլ *խ և հ*, օրինակ՝ *խրատ-խըրադ, ծախել-ձախէլ, նախիր-նախիր, գլուխ-գըլօխ, մուխ-մուխ հազ-հազ, հալել-հալէլ, հինել-հինէլ, ռեհան-ռըհան* են: Պայթական և կիսաշփական հնչյուններին նախորդող *ր* ձայնորդը ևս մնում է անփոփոխ, այսպես՝ *արծաթ-արձաթ, գորտ-գօրդ, զարթուն-արթուն* են: Բառամիջի և բառավերջի դիրքերում *գործառող ռ* ձայնորդը նույնպես փոփոխություն չի կրում, օրինակ՝ *ախոռ-ախօռ, կռունկ-կըռունկ, վառել-վառէլ, փռել-փըռէլ* և այլն: Փոփոխության չեն ենթարկվում նաև օտար բառերի բառասկզբի *ֆ* և ղ հնչյուններ, այսպես՝ *ֆինջան-ֆիլջան, ֆլան-ֆըլան, ղարիբ-ղարիբ* են:

ՀԲԱ-ի ծրագրով տրված հասկացական-բառանվանողական զուգաբանություններին Պարտիզակի խոսվածքում համապատասխանում են հնչյունական տարբերակներ և բառային տարբեր արտահայտություն ունեցող ձևեր: Ստորև ներկայացնում ենք հասկացական-բառանվանողական այն զուգաբանությունները, որոնց իմաստը Պարտիզակի խոսվածքում դրսևորվում է բառային այլ արտահայտությամբ: Դրանք են՝ *գազաթ-թէփէ, անտառ-մէշէ, քամի-հօվ /զովություն/, ֆըրթընա /ուժեղ քամի/, ծիածան-ձիրան գօղի, ցող-շաղ, կաթիլ-պուտ, սառույց-բուզ, ստվեր-շուք, կողմ-թին/թարաֆ, գիծ-խազ, առաստաղ-առիք, զուգարան-պէտքարան, ջրհորդան-օլուխ, եկեղեցի-ժամ, ցեխ-չամուռ, աթար-թըրիք, արմատ-քօք, տերև-յափրախ, կեղև-ղաբուխ, կորիզ-գուդ, սերմ-հունդ, եգիպտացորեն-միսիր, լոբի-ֆասուլյա, դեղձ-շըֆթըլու, կաղին-ֆոընդրխ, նուշ-պադէմ, բարդի-ղավախ, սածիլ-ֆիդան, գազար-հավուջ, դանդուռ-փըրփըրէմ, հասկ-սափ, կողով-սէբէթ, փոցխ-տըմրըխ, եղան-դիյրէն, հէսան-սըրաքար, մեխ-գամ, ակիշ-տաշտըքէր, թթխմոր-մայա, խցան-մանթար, ձագար-հունի, շյուղ-շիշ, պարան-չուվան, կապերտ-չուլ, անկողին-յաթախ, համրիչ-թըզբէհ, օձիք-յախա, քղանցք-փէշ, տրեխ-չարուխ, տրեխի քուղ-սըրիմ, ճոճ-սալընջախ,*

[7] Նույտեղում:
[8] Նույտեղում:

բարուր-ղօնդախ, օժիտ-ճրիէզ, նոր տարի-կաղանդ, ծննդկան-լօղուսա//տըղացկան, երեխա-չօջուխ, տատ-մէնձ մար, տերտերակին-իրիսկին, քահանա-տէրտէր, անորորդի-անէրծաք, ամուսին-էրիկ, մորեղբայր-տայտայ//տայի, տագերկին-նէր, ծերունի-էխտիյար, արու զավակ-մանչ, հարևան-դըրացի, ջրաբաշխ-ջիվար, որսորդ-ավչի, հովիվ-չօբան, անասուն-հայվան, կրիա-թասպաշի, չղջիկ-քիշէրամուգ, մողես-խլէզ, սարդ-մամուգ, բոռ-մօզ, թռչուն-ղուշ, հնդկահավ-ճօքճօք, հոպոպ-իբիբիգ, աքաղաղ-խօրօզ, թուխս-կուռթ, ձու-հավգիթ, խայթոց-փուշ, ատամն-ագռա, բուռ-ավուջ, բռունցք-յումրուխ, ազդր-բալդըր, պարանոց-ճիտ, կոկորդ-բօղազ, մեջք-կըռնագ, եղջյուր-կօտօշ, թևատակ-ղոլթուխ, շրթունք-պըռղը, արտևանունք-թարթիչ, միզապարկ-փուչիկ, պզուկ-պուշտ, վերք-յարա, քարխեշ-նասըր, հարբուխ-նավազիլ, թույն-զէհիր, հում կաթի սեր-ղայմախ, ճարպ-ճըրաքու, դոշաբ-բէքմէզ, ձավար-բուլղուր, ճոճանակ-սալընջախ, տիկնիկ-պէբէք, ճան-վէք, համբույր-պաք, ապտակ-շամառ, երկյուղ-վախ, ոխ-քէն, ժամանակ-ատէն, գեղեցիկ-աղվօր, լավ-աղէգ, մեծ-խօջաման, գեր-շիշման, նվազ- զաիֆ, նիհար-զայիֆ, դառն-լէղի, ամուր-բինդ, բութ-քօռ, սպիտկա-ճերմակ, շեկ-սարը, փոքրիկ-բըզդիգ, թանկ-սուդ, կաղ-թօփալ, կորամեջք-դամբուռ, համր-լալ, խուլ-սաղըր, պեպնոտ-պէնգօտ, ծաղկատար-չօփուռ, փափուկ-կազօղ, մաքուր-էթմիզ, ժլատ-կըծծի, մերկ-չըլբախ, սառն-բաղ, խոնավ-թավ, կիսրար-օրթախ, թխել-էփէլ, աշխատել-բանէլ, քանդել-քազէլ, մտցնել-խօթէլ, պլոկել-փըրցընէլ, կեզևել-մաքրէլ, խուտուտ տալ-ղըդիգ տալ, մեխել-գամէլ, հավաքել-ժողվէլ, հանգցնել-մարէլ, պարզաջրել-ցօղվէլ, փակել-կօցէլ, ավարտվել-լըմընալ, սառչել-բաղէլ, հանդիպել-ըռաստ կալ, հայտնել-խաբար տալ, կոպտել-չէխէլ, փափկել-կազօղնալ, սպիտակել-ջէրմըգնալ, թիկնել-կըռթընալ, առողջանալ-աղէկնալ, ամուսնանալ-կարքըվէլ, նվազել-չալէլ, համբուրել-պաքնէլ, զբոսնել-բըդրդէլ, փաթաթել-բըլլէլ, հարվածել-զարնէլ, ցրել-տարդըղնէլ, բարկանալ-հէրսօղէլ, զզվել-գանէլ, այժմ-հիմա, ճիշտ-շիտակ, դարձյալ-նօրէն, իզուր-պարապ, կարծես-կիդէս քի, ինչպես-ընդօր, ներքև-վար, այնուհետև-ատքէ յէտ,փոխարէն-էվէզ, բացի-զատ, ափսոս-մէխք:

Պարտիզակի խոսվածքում գործառող *–եր (էր)* և *-ներ (նէր)* հոգնակերտների զուգորդելիությունը թվանիշ հիմքերին պայմանավորված է դրանց ձևաիմաստային առանձնահատկություններով: *-Եր (էր)* վերջավորությունը բաղադրվում է միավանկ բառերին *(փադ-փադէր, միս-միսէր, բարց-բարցէր, թէվ-թէվէր* ևն*)*, կենդանիների՝

միավանկ հիմքով անուններին *(ուլ-ուլէր, էզ-էզնէր, էշ-էշէր* են*)*, գրաբարյան *-ն* վերջնահնչյունով միավանկ բառերին, որոնց գերակշիռ մասը հատկանշվում է հոգնակերտից առաջ *ն* վերջնահնչյունի անկմամբ *(տուռ «դուռն»-տուռէր, ձունգ-ձունգէր, պէռ «բեռն»-պէռէր, կառ «գառն»-կառէր, մուգ-մուգէր, նուռ-նուռէր են)*, գաղտնավանկ վերջնավանկով երկվանկ բառերին, այսպես՝ *ասխ «աստղ»-ասխէր, սայր-սայրէր, մանր-մանրէր են, ինչպես նաև* միավանկ վերջնաբաղադրիչով այն բարդ բառերին, որոնց վերջնաբաղադրիչը պահպանում է իր իմաստային ինքնուրույնությունը, այսպես՝ *տանդէր*-«տանտեր»-*տանդէրէր, հորքուր* «հորաքույր»-*հորաքուրէր, աղճուր* «աղաջուր»-*աղճուրէր, գընքամար*-«կնքամայր»-*գընքամարէր* են: *-Ներ (նէր)* հոգնակերտ վերջավորությունը բաղադրվում է բազմավանկ բառերին, այսպես՝ *ընգէր «ընկեր»-ընգէրնէր, իլիկ «իլիկ»-իլիկնէր, խընձօր «խնձոր»-խընձօրնէր, ձաղիկ «ծաղիկ»-ձաղիկնէր* են:

Պարտիզակի խոսվածքը հատկանշվում է հոլովանիշ վերջավորությունների և հերթագայությունների առկայությամբ, ինչպես նաև եզակի թվի հարացույցում *ի* հոլովանիշ թեքույթի, իսկ հոգնակիում՝ *ու* հոլովանիշի ընդհանրական արժեքով: *Ի* հոլովանիշ վերջավորությունը գործածվում է գրաբարյան *ն* վերջնահնչյունով (*տուռ* «դուռն»-*տուռի(ն), ձունգ* «ծունկն»-*ձունգի(ն), ծուգ* «ձուկն»-*ծուգի(ն), մադ-մադի(ն), օտք «ոտք»-օտքի(ն)* են) և *ք* հոգնակերտով բառերի (*փառք-փառքի(ն), միտք-մըտքի(ն), հարսնիք-հարսնիքի(ն)* են), ինչպես նաև, կենդանիների և թռչունների անունների (*կաքավ-կաքավի(ն), կատու-կատուի(ն), հավ-հավի(ն), աղվէս-աղվէսի(ն)* են) եզակի թվի հարացույցում՝ կազմելով նրանց սեռական-տրական հոլովաձևը: Անձնանունները (Դիքրան-Դիքրանի*(ն)*, Անուշ-Անուշի*(ն)*, Նէրսէս-Նէրսէսի*(ն)* են) և տեղանունները (Պարտիզակ-Պարտիզակի, Ադափազար-Ադափազարի, Արմաշ-Արմաշի են) նույնպես այս հոլովման են ենթարկվում: Հոլովանիշ հիմքի և -ոջ թեքույթի համադրությամբ են բաղադրվում ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերի սեռական հոլովաձևերը, օրինակ՝ *քուր «քույր»-քըրոջ, տէր-տէրոջ, դաքըր «տեգր»-դաքըրոջ, կէսուր «սկեսուր»-կէսրոջ, դալ «տալ»-դալոջ, ընգէր-ընգէրոջ* են: Ժամանականիշ բառերի սեռական հոլովաձևերը կազմվում են *-վան* հոլովական վերջավորությամբ, այսպես՝ *առդուն «առավոտ»-առդվան, քիշէր «գիշեր»-քիշէրվան, իրգուն «երեկո»-իրգըվան, գէսօր «կեսօր»-գէսօրվան, օր-օրվան* են: Բացառական հոլովը ձևավորվում է *–էն* հոլովանիշ թեքույթի և հոլովանիշ հիմքի զուգորդելիությամբ, այսպես՝ *աղվէսէն* «աղվեսից»-

աղվէսներէն, թռէն «թռռից»-*թռռէրէն, լէրէն* «լեռից»-*լէրներէն, գէդէն <<գետից>>-գէդէրէն* են: Գործիական հոլովի իմաստը արտահայտվում է *-ով* հոլովանիշ վերջավորությամբ բաղադրված կազմություններով, այսպես՝ *բէրանով-բէրաններով, ամսով* «ամսով»-*ամսներով, քարով-քարէրով, լէզվով-լէզուներով* են: Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է ուղղականաձև հայցականով /գէդը, աշխարը, գէղը են/ կամ *մէջ* հետադրության և տրական հոլովաձևի բաղադրությամբ *(խոզին մէջը, ճուրին մէջը, տաշտին մէջը, աշխարին մէջը, փօրին մէջը* են*)*: Հոգնակի թվաձևերի սեռական հոլովաձևերը կազմվում են *ու* հոլովական վերջավորությամբ, այսպես՝ *գովէր «կովեր»-գովէրուն, շունէր «շներ»-շունէրու/ն/, ճուրէր «ջրեր»-ճուրէրու/ն/, դունէր* «տներ»-*դունէրուն, քաղաքնէր-քաղաքնէրուն* են:

Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրական հոլովը կազմվում է գրաբարյան հոլովաձևերի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչյունական տարբերակների և *ի* հոլովանիշ թեքույթի զուգորդությամբ, այսպես՝ *ընձի, քէզի, մէզի, ձէզի*[9]: Հայցական հոլովը տրականաձև է (*գրսիրէ ընձի, քէզի, մէզի, ծէզի*): Անձնական դերանունների բացառական հոլովաձևը կազմվում է տրականի հիմքի և *-մէ* հոլովանիշ թեքույթի (*ինձիմէ, քէզմէ, մէզմէ, ձէզմէ, իրենմէ, իրենցմէ),* իսկ գործիականը՝ տրականի հիմքի և *–մով* վերջավորության համադրությամբ (*ինզմով, քէզմով, մէզմով, ձէզմով, իրենմով, իրենցմով)*[10]:

Գրաբարյան 4 լծորդություններից (ա, ի, ե, ու) Պարտիզակի խոսվածքում պահպանվել են 2-ը՝ *ա, է*, օրինակ՝ *կիտնալ, վըլալ, դէսնալ, առնէլ, խըմէլ, դընէլ* են: Խոսվածքում բացակայում են անկատար և ապառնի դերբայները: Վաղակատար դերբային բնորոշ է *–էր* վերջամասնիկը՝ *մընացէր իմ, զարմացէր իմ* են, հարակատարին՝ *–ած*, այսպես՝ *էփած, նըշանված, զարմացած* են: *Ա* խոնարհման բայերի ենթակայական դերբայը բաղադրվում է անցյալի հիմքով, օրինակ՝ *կողցող, զարմացող, մօտէցող, հասկըցող, վախցող* են: Ժխտական դերբայը իմաստը արտահայտվում է անորոշի հիմքի և *-էր, -ար, -իր* թվադիմանիշ թեքույթների զուգորդությամբ՝ *(չիմ) ըսէր, (չիմ) մընար, (չիմ) խօսիր են*:

Պարտիզակի խոսվածքում եղանակային իմաստները դրսևորվում են 4 կառուցատիպերով, որոնց բովանդակության պլանում համապատասխանում է եղա-

[9] Տե՛ս նույն տեղը:
[10] Տե՛ս նույն տեղը:

նակային 5 իմաստ՝ սահմանական-ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական: Խոսվածքում ըղձական եղանակի ժամանակաձևերի իմաստով գործածվում են գրաբարյան ներկա և անցյալ անկատար բայաձևերը, որոնք, կրելով միայն հնչյունական փոփոխություններ, ձևային տարբերակվածությամբ չեն հատկանշվում, այսպես՝ *կըրէյի, կըրէյիր, կըրէր, կըրէյինք, կըրէյիք, կըրէյին*: Իմաստային տարբերակվածություն են դրսևորում *կու (գը/գ)* և *պիտի (տը/տ)* եղանականիշ մասնիկներով կազմությունները: Հրամայական եղանակի եզակի թվի իմաստը արտահայտվում է *է, ա, իր* վերջավորություններով բաղադրված կազմություններով: *Է* վերջավորություն են ստանում *ե* խոնարհման պարզ բայերը, այսպես՝ *գըրէ, գաբէ, պադմէ, սիրէ, նըստէ, փօխէ, քամէ* են, *-ա* վերջավորություն՝ *ա* խոնարհման պարզ բայերը, օրինակ՝ *մընա՛, խընդա՛, կարթա՛, հավադա՛* են: *Ե* և *ա* խոնարհման ածանցավոր բայերի հրամայականի ձևերը կազմվում են *-իր* վերջավորությամբ, այսպես՝ *էլի՛ր, իճի՛ր, իմացի՛ր, հասկըցի՛ր,* և այլն: Ա խոնարհման ածանցավոր բայերը *-իր* վերջավորությունը հավելում են անցյալի ցոյական հիմքին, այսպես՝ *մէծցի՛ր, մօդէցի՛ր* են, իսկ *ե* խոնարհման բայերը՝ ներկայի հիմքին՝ *հասի՛ր, մըդի՛ր*: Հրամայականի հոգնակի թվի ձևերը բաղադրվում են *–էք* վերջավորությամբ, որը համադրվում է անցյալի ցոյական հիմքին, այսպես՝ *մաղէցէ՛ք, բադմէցէ՛ք և պարսըցէ՛ք, իմացէ՛ք, վըլացէ՛ք* են: *Կու* եղանականիշով բաղադրված կառույցները արտահայտում են ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, սահմանական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ (*կըկըրէմ* «*գրում եմ*», *կըկըրէս, կըկըրէ, կըկըրէնք, կըկըրէք, կըկըրէն, գուդիմ* «*ուտում եմ*», *գուդէս, գուդէ, գուդինք, գուդիք, գուդին*, *կըսէյի, կըսէյիր, կըսէր, կըսէյինք, կըսէյիք, կըսէյին)*, իսկ *պիտի*-ով կազմությունները՝ սահմանական և հարկադրական ապառնիների (*պիդի ուդիմ*, *պիդի ուդիս, պիդի ուդէ, պիդի ուդինք, պիդի ուդէք, պիդի ուդին)* և անցյալի ապառնիի (*պիդի ուդէյի*, *պիդի ուդէյիր, պիդի ուդէր, պիդի ուդէյինք, պիդի ուդէյիք, պիդի ուդէյին)*: Պարտիզակի խոսվածքում տարբերակվում են ընդհանրական և շարունակական ներկաները: Շարունակականի իմաստը դրսևորվում է ընդհանրական ներկայի ձևերի և ***օր*** բառ-մասնիկի զուգորդություններով, այսպես՝ *կուդիմ օր, կուդէս օր, կուդէ օր, կուդինք օր, կուդէք օր, կուդին օր*: Անցյալ կատարյալի իմաստը արտահայտվում է պարզ ժամանակաձևերով՝ *խըմէցի, խըմէցիր, խըմէց, խըմէցինք, խըմէցիք, խըմէցին*:

ժխտական խոնարհման կառուցատիպերը ձևավորվում են նախամասնիկների զուգորդությամբ: Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերի (դերբայակազմ ժամանակաձևեր, անցյալ կատարյալ, ըղձական (անցյալ-ապառնի) ժխտական կազմությունները ձևավորվում են *չ* ժխտական մասնիկով, որը համադրվում է հաստատական խոնարհման ձևերին, այսպես՝ անց. կատ.՝ *չըգըրէցի, չըգըրէցիր, չըգըրէց, չըգըրէցինք, չըգըրէցիք, չըգըրէցին,* ըղձ. ապառնի՝ *չըխըմիմ, չըխըմէս, չըխըմէ, չըխըմինք, չըխըմէք, չըխըմին: Կը* (կ) եղանականիշ մասնիկ ունեցող կազմությունների ժխտական ձևերը բաղադրվում են ժխտական դերբայի (կամ նրա փոփոխակների) և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ, այսպես՝ *չէմ սիրէր, չէս սիրէր, չըսիրէր, չէնք սիրէր, չէք սիրէր, չէն սիրէր*: *Պիտի* եղանականիշով բաղադրված կազմությունների ժխտական խոնարհման ձևերում *չ /չի/* մասնիկը նախորդում է եղանականիշին, այսպես՝ *չի բիդի խըմիմ «չպիտի խմեմ», չի բիդի խըմէս, չի բիդի խըմէ, չի բիդի խըմինք, չի բիդի խըմէք, չի բիդի խըմէն:* Արգելական հրամայականի իմաստը արտահայտվում է *մի /մը/* արգելական մասնիկի նախադաս կիրառությամբ, այսպես՝ *մը՛ խաղար, մը՛ էրթար, մը՛ գարթար, մը՛ խօսիր* ևն:

Պարտիզակի խոսվածքը հատկանշվում է *մը* անորոշ հոդի հետադաս գործածությամբ, այսպես՝ *Մարթ մը, գընիգ մը գըլլան* «Մի մարդ ու մի կին են եղել»: *Օր մը աս մարթը կըհիվանտանա* «Մի օր այս մարդը հիվանդանում է»: Խոսվածքում որոշյալությունը դրսևորվում է *ը* և *ն* որոշիչ հոդերով (*Ձառը ձաղգէցավ* «Ծառը ծաղկեց»*: Էնօր քէչին սաղգէցավ* «Նրա այծը սատկեց»): Ն որոշիչ հոդը գործառում է ձայնավորահանգ բառերի դեպքում: Հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը արտահայտվում է համանիշ կառույցների գործածությամբ՝ որոշյալ հատկացյալի հետ որոշյալ հատկացուցիչ *(ծառին յափրախը «տերև», արդին խօղը, Սարքիսին դրղան)* և որոշյալ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ *(ձառի յափրախը, արդի խօղը, Սարքիսին դրղա)*: Ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է: Ուղիղ խնդիրը գործածվում է ստորոգյալին նախադաս դիրքով (*Կաղուն մուգ բըռնէց, Քէռին խօտ կըքաղէ*): Անձի անունների դեպքում ուղիղ խնդիրը տրականաձև կամ ուղղականաձև հայցականով է ձևավորվում (*Մարը կըսիրէ Անուշը//Անուշին* «Մայրը սիրում է Անուշին», իսկ իրի անունների դեպքում՝ ուղղականով *(Ագօփը դուն գըշընէ* «Հակոբը տուն է շինում»: *Հօղը բաղին դագը լէցու՛ր* «Հողը պատի տակ լցրու՛»): Տրակա-

նաձև հայցականով է դրվում անորոշ դերբայով արտահայտված նպատակի պարագան, այսպես՝ *Գացինք խընձօր հավաքէլու* «Գնացինք՝ խնձոր հավաքելու», *Գընաց արդը ճըրէլու* «Գնացին՝ արտը ջրելու»: Տեղի պարագայի իմաստը դրսևորվում է վերլուծական *(մէչ* կապ+սեռական հոլովաձև՝ *Ամանին մէչը ճուր չիքա* «Ամանի մեջ ջուր չկա», *Տաշտին մէչը հաց չիքա* «Տաշտում հաց չկա») և համադրական (հայցական հոլովաձև՝ *Էքին կըպանին «Այգում աշխատում են», Գէղը կաբրի «Գյուղում կապրի»)* կառույցներով: *Խոսվածքը հատկանշվում է հետ, մոտ, մեջ, վրա, առջև* կապերի հետադաս կիրառությամբ, այսպես՝ *քարին քօվը* «քարի մոտ», *ախպօրը քօվը* «եղբոր մոտ», *ընգէրնէրուն հէղ* «ընկերների հետ», *դունին առչէվը «տան առաջ», ճամփուն վըրա* «ճանապարհի վրա», *ճուրին մէչը* «ջրի մեջ» ևն:

Այսպիսով, Պարտիզակի խոսվածքը բնութագրվում է հնչյունաքերականական ու բառապաշարային զուգաձևությունների առատությամբ և ներկայանում է որպես բարբառային հայերենի ինքնատիպ մի դրսևորում: Աշխատանքը կարևորվում է արևմտահայ տարածքի կորստյան վտանգի առջև կանգնած բարբառային միավորի պահպանված վիճակի ամրագրմամբ և բարբառային նյութը անդառնալի կորստից փրկելու փաստով:

The speech of Partizak is characterized by the abundance of phonetic-grammatical and vocabulary couples, and is presented as a unique manifestation of Armenian dialectic. The work is important for the preservation of the dialectic unit survived facing the loss of the territory and the fact that the dialectic material is